ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 փետրվարի 2024 թվականի N 194 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2344-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 318-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2323-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2344-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) որոշման 3-րդ կետը «օրվանից» բառից հետո լրացնել «և տարածվում է 2023 թվականի դեկտեմբերի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա։» բառերով։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման N 2 հավելվածի 36.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36.2. Սկսած 2024 թվականի հունվարի 1-ից՝ փորձարարական եղանակով 6 ամիս ժամկետով պայմանագրային գումարի չսահմանափակման սկզբունքը կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Ըստ փաստացի կատարողականի փոխհատուցվող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ», «Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում և շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ», «Կոլոռեկտալ քաղցկեղի սքրինինգ», «Սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ», «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ», «Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ», «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ», «Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկենտոնուրիայի, լսողության և տեսողության (անհասների ռետինոպաթիա) խանգարումների, կոնքազդրային հոդի խախտման վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սքրինինգների անցկացում», «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ», «Դատաբժշկական փորձաքննություններ», «Ախտաբանաանատոմիական հետազոտու-

թյուններ», «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ», «Թրաֆի-քինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ», «Շտապ բժշկական օգնության ծառայություններ», «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ», «Փոխպատվաստման ծառայություններ», «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ», «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների համար, իսկ գումարները նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով:»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման N 4 հավելվածում Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի 1099 ծրագրի «11001. Ըստ փաստացի կատարողականի փոխհատուցվող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ», «11004. Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում և շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» և «11006. Կոլոռեկտալ քաղցկեղի սքրինինգ» միջոցառումների, 1142 ծրագրի «11001. Դատաբժշկական փորձաքննություններ» և «11002. Ախտաբանաանատոմիական հետազոտություններ» միջոցառումների, 1200 ծրագրի «11003. Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ», «11004. Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ», «11006. Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ», «11007. Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի, լսողության և տեսողության (անհասների ռետինոպաթիա) խանգարումների, կոնքազդրային հոդի խախտման

վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սքրինգների անցկացում» միջոցառումների, 1201 ծրագրի «11001. Շտապ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման, 1202 ծրագրի «11002. Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» և «11004. Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների, 1207 ծրագրի «11001. Սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ», «11002. Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ», «11005. Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» և «11007. Փոխպատվաստման ծառայություններ» միջոցառումների, ինչպես նաև 1208 ծրագրի «11001. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» և «11003. Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածը փոխարինել «Այլ նպաստներ բյուջեից» ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ